

Մի աղջիկ կար , ով ապրում էր Չինաստանում: Նա ծագումով Յունասն
նահանգից էր: Նա շատ խելացի ու անուշիկ աղջիկ էր : Ապրում և
մեծանում էր աղքատ ընտանիքում :

Մի անգամ ընտանիքով ինչ -որ տեղ գնալիս նրանք ավտովթարի են
ենթարկվում : Այդ ժամանակ նա ընդամենը չորս տարեկան է լինում
: Աղջիկը , իհարկե , ողջ է մնում , բայց զրկվում է երկու ոտքերից :
Այդքանից հետո նույնիսկ նա իր մեջ ուժ է գտնում և շարունակում
ապրել :

Մենք հաճախ ենք լսում այս խոսքերը` մի՛ հանձնվիր , բայց դա
երբեմն կարող է պարզապես խոսք լինել : Աղջկա անունը Տյան
Հոնգյան էր : Նա իր ուժեղ կամքով կարողացել է ոգեշնչել
հաշմանդամություն ունեցող շատ մարդկանց : Արդեն ասացի , որ
նրանք շատ աղքատ էին, դրա համար էլ ընտանիքը նրան չի
կարողանում ապահովել պրոթեզներով : Ինչ -որ տեղ գնալու համար
նրան ծնողները տանում էին գրկած` ձեռքերի վրա: Նա հաճախում
էր դպրոց : Այն ճանապարհը , որը աղջիկը պետք է անցներ յոթ
րոպեում, անցնում էր մեկ ժամում : Ծնողները չէին կարողանում
նրան ապահովել պրոթեզներով , սակայն նրա պապիկը գտնում է
Տյանին օգնելու հնարը : Նա իր հարազատներից խնդրում է
բասկետբոլի գնդակ : Այն , ինչ ասելու եմ հիմա , իսկապես կցնցի ձեզ
: Պապիկն այնքան տարված էր թռուսն օգնելու մտքով , որ այդպիսի
բան էր մտածել : Նա բասկետբոլի գնդակը կտրել էր , թռուսը դրել
էր գնդակի մեջ և նրան շարժվելու համար տվել էր շինարարական
գործիքներ : Աղջիկն ասում էր , որ իր ընկերները դասերից հետո
վազում էին բակ և ցատկոտում : Աղջիկը շատ էր նախանձում նրանց
: Նա հինգ տարվա մեջ մաշեցնում է ութ գնդակ : Սակայն կային բարի
մարդիկ : 2007 թվականին մամուլի ուշադրության շնորհիվ աղջկան
հրավիրում են Պեկին, որտեղ նա ստանում է պրոթեզներ : Տասնմեկ
տարեկանում նա իմանում է , որ չի կարող ուսումը շարունակել իր
հասակակիցների հետ : Սակայն գտնում է ելքը և միանում լողի
ակումբին : Տյանին հաճախ լրագրողներն անվանել են բասկետբոլի
գնդակի աղջիկ : Աղջկան թվում էր , որ ինքը լողալու ընթացքում
կարող է խելո՞վել , բայց ոչ , գնալով ավելի էր հմտանում: Նա ամեն
օր լողում էր տասը կիլոմետր: Նրա մեջ լողալու ընթացքում միշտ էլ
վախ կար , բայց նա շարունակում էր մարզվել ու լողալ , քանի որ
ցանկանում էր մասնակցել պարաօլիմպիկ խաղերին : Դրա համար նա
պատրաստ էր օրվա մեջ լողալ նույնիսկ չորս ժամ :

2013 թվականին , երբ Տյանը տասնութ տարեկան էր , ստանում է
մեծահասակի գիպսեր: Շատ շուտով մասնակցում է մրցումների ու
խաղերի և հաճախ դառնում հաղթող : 2010 թվականին աղջկան
հրավիրում են Ռիո դե Ժանեյրոյի պարաօլիմպիկ խաղերին : Նա
մասնակցում է այդ խաղերին , որտեղ չի հաղթում, բայց մտնում է
հաղթողների առաջին տասնյակի մեջ : 2020 թվականին նա նորից
մասնակցում է խաղերի , որոնք տեղի են ունեցել Տոկիոյում : Նա

այժմ 21 տարեկան է : Եվ ես վստահ եմ, որ նրան շատ շուտով ոչ միայն կանվանեն բասկետբոլի գնդակի աղջիկ, այլ նաև նա կդառնա աշխարհի բազմակի չեմպիոն :

Նաթելա Սաֆարյան